

U II
2869

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ ԱՐՄԵՆԻ

ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ
ԱՌԱՆՁՆԱԶՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04 - Ղատական իրավունք (ղատարանակազմություն, քաղաքացիական
ղատավարություն, քրեական ղատավարություն, կրիմինալիստիկա, ղատական
փորձարնություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական
գործունեության տեսություն) մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАЗАРЯН АРТАК АРМЕНИОВИЧ

ОСОБЕННОСТИ ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛАМ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ В
УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский процесс,
уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория
оперативно-розыскной деятельности)

Երևան-2021

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Աղվանի Դիրանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահե Գուրգենի Ենգիբարյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արսեն Ռուբինի Մարտիրոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ արդարադատության ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի
դեկտեմբերի 15-ին ժամը 14³⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝
ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք.
Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է ս.թ. նոյեմբերի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ *Ս. Շ.* Ս. Շ. Սուջյան

Тема диссертации утверждена в

Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор
Самвел Агванович Дилбандян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор
Варе Гургенович Енгигбарян
кандидат юридических наук, доцент
Арсен Рубенович Мартиросян

Ведущая организация: Академия юстиции РА

Защита состоится 15-ого декабря 2021 г. в 14³⁰ часов на заседании
специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 2-ого ноября 2021 года.

Ученый секретарь специализированного совета, *11-2869*
кандидат юридических наук, доцент *Ս. Շ.* Т. О. Суджян



Սեղ. 6 ապր

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության արդիականությունը: Քրեական դատավարության տեսութ-
յունում մեղադրանքի կազմակերպման հարցերի ուսումնասիրությանը միշտ էլ
տրվել է առանձնահատուկ տեղ՝ պայմանավորված մեղադրանքի իբրև քրեական
դատավարության գործառույթի քրեական դատավարության համար հիմնարար
նշանակությամբ:

Գիտակցելով հանցագործությունների հանրային իրավական նշանակությու-
նը՝ մեղադրանքի այդ դժվար և պատասխանատու գործառույթը մեր ժամանակ-
ներում պետությունները վերցրել են իրենց ձեռքը, այլ կերպ ասած՝ այժմ մեղադ-
րանքը հանդիսանում է (առավելապես) պետական գործառույթ, այն իրականաց-
նում են պետական պաշտոնատար անձինք և պետական մարմինները:

Սակայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումն իր
դրական կողմերի հետ մեկտեղ որոշակի բացասական հետևանքներ է առաջաց-
նում (ծագում են մեղադրանքի «քաղաքականացվածության», պետական մեղադ-
րանք իրականացնող մարմինների ռեսուրսների անբավարարության վտանգներ,
անտեսվում կամ երկրորդային պլան են մղվում հանցագործության գոհի շահերը
և այլն): Հետևաբար առաջանում է ընդհանրապես մասնավոր անձանց և մասնա-
վորապես հանցագործությունից տուժած անձի մեղադրանքի իրականացման,
մասնակցության անհրաժեշտությունը:

Մյուս կողմից, սակայն, մեղադրանքի իրացումը տուժողին միայն մեխանիկո-
րեն վերապահելը, հարուցվող և իրականացվող հանրային (պետական) մեղադ-
րանքի տնօրինման վրա տուժողի ազդեցության մասնակցության հարցերը զուտ
մեխանիկորեն որոշելը եղի են տուժողի իրավունքների ու օրինական շահերի և
հանրային շահերի ոչ արդյունավետ պաշտպանության ապահովման վտանգով:
Այս առումով արդիական է դառնում տուժողի կողմից իրականացվող մեղադրանքի
կազմակերպման հարցերի գիտական խորագնին ուսումնասիրման անհրաժեշ-
տությունը: Հարցի հրատապությունը առաջնային դեր է ստանում հատկապես
ներկայումս ընթացող դատաիրավական բարեփոխումների և հատկապես սույն
հետազոտման իրականացման ընթացքում ընդունված ՀՀ քրեական դատավա-
րության նոր օրենսգրքի համատեքստում, որով մասնավոր անձի կողմից իրա-
կանացվող մեղադրանքի գործող օրենսգրքից էականորեն տարբերվող բոլորովին
այլ մոդել է առաջարկվում ներդնել:

Այս համատեքստում խիստ արդիական են դառնում մրցակցային դատավարու-
թյունում մեղադրանքի կազմակերպման, մասնավոր և պետական մեղադրանքի հա-
րաբերակցության, մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի»
ինստիտուտների ճիշտ փոխհարաբերակցության որոշման, այս ինստիտուտների
էության ու նշանակության ճիշտ ընկալման և մի շարք այլ հարցեր, որոնք բացահայ-
տելու շնորհիվ հնարավոր կլինի վեր հանել թե՛ գործող ՀՀ քրեական դատավարու-
թյան օրենսգրքի, թե՛ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումնե-
րի թեր և դեմ կողմերը՝ առաջարկելով ընդհանուր, համակարգային լուծումներ:

Բացի այդ, հայկական քրեական դատավարության տեսությունում սույն թեմայով
կատարված համակարգած ու ամբողջական ուսումնասիրության բացակայության

հանգամանքը նույնպես մեծացնում է հետազոտության արդյակականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական խնդիրների վերահամար, նշված ինստիտուտների էության բացահայտումը, դրանց վերախմաստավորումը, որը թույլ կտա բոլորովին այլ լույսի ներքո դիտարկել ինչպես գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, այնպես էլ բոլորովին վերջերս ընդունված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումները, բացահայտելով դրանց թերությունները և համակարգային լուծումներ առաջարկելով՝ խուսափելու ինչպես ներկայումս, այնպես էլ ապագայում հնարավոր առաջացող մի շարք խնդիրներից:

Նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել.

- Բացահայտել մրցակցային (մեղադրական) դատավարությունում մեղադրանքի կազմակերպման հնարավորությունները՝ հստակորեն որոշելով մասնավոր մեղադրանքի տեղը դատավարության այդ մոդելում:

- Տարանջատել մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակները՝ հստակ որոշելով տարանջատման հիմքը:

- Տարբերակել մասնավոր մեղադրանքի տեսակները, բացահայտել դրանից յուրաքանչյուրի բնորոշ գծերը, առանձնահատկությունները:

- Բացահայտել մասնավոր մեղադրանքի նշանակությունը:

- Հստակորեն տարանջատել մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները միմյանցից՝ քննելով դրանց փոխադասմանավորվածության հարցերը:

- Վեր հանել քրեական դատավարության տեսության մեջ առկա «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի գոյությունը հիմնավորող տեսությունները և դրանցից յուրաքանչյուրից բխող հետևություններ անել նշված գործերով մեղադրանքի կազմակերպման ու այլ առանցքային հարցերի առնչությամբ:

- Բացահայտել մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության, «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցության հարցերը:

- Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները, վեր հանել դրանց թերությունները՝ առաջարկելով ընդհանուր և հայեցակարգային լուծումներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի կապակցությամբ ծագող դատավարական հարաբերություններն են: Հետազոտության առարկան «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի հարաբերությունները կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերն են, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ նոր քրեական օրենսգրքի կարգավորումները, իրավակիրքառ պրակտիկան, միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը են հանդիսացել «մասնավոր մեղադրանքի գործերին» և մասնավոր մեղադրանքին առնչվող ՀՀ և այլ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկայի նյութերը, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը:

Հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսությունը հայրենական իրավագիտության առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել և վերլուծել մասնավոր մեղադրանքի ու «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները և առաջարկել համալիր լուծումներ, որոնցով հնարավոր է խուսափել գործնականում առաջացող մի շարք խնդիրներից: Նշված վերլուծությունները կատարվել են հիմնվելով ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ նոր քրեական օրենսգրքի, համապատասխան ոլորտներին վերաբերող իրավական ակտերի, այլ պետությունների քրեադատավարական օրենսդրությունների, դատական պրակտիկայի համեմատալրավական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած գիտական մոտեցումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, հիման վրա:

Հետազոտվել են հայրենական դատավարական գրականության մեջ չուսումնասիրված մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակների հարաբերակցության, մասնավոր մեղադրանքի տեսակների դասակարգման, մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության կապի հարցերը, մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտների հարաբերակցության հարցերը, «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող տարբեր տեսությունների, դրանցից յուրաքանչյուրից բխող տարբեր հետևությունների հարցերը և այլն: Արդյունքում՝ կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.**

7. Հետազոտության մեջ, առանձնացնելով մեղադրական (մրցակցային) տիպի դատավարության կազմակերպման երկու տարբեր, մեկը մյուսին ըստ էության հակադրվող տեսություններ, ի մի բերելով բոլոր քննադատությունները, որոնք վերաբերվում էին դրանցից մեկին՝ «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միախյուսման» տեսությամբ և այդպիսով հիմնավորվում մյուս տեսությունը՝ «մեղադրական (մրցակցային) ձևի» տեսությունը, աշխատության մեջ ներկայացնում է այդ քննադատությունների հաղթահարման ուղիները: Եվ, ելնելով երկու տեսությունների իրար հակադիր լինելու հանգամանքից, այդպիսով իսկ արձանագրվում է «մեղադրական (մրցակցային) ձևի» տեսության չիմնավորված լինելը: Այս համատեքստում, վերլուծելով գիտության մեջ հարյուր հիսուն և ավել տարի գոյություն ունեցող այն մոտեցումը, թե մեղադրական (մրցակցային) դատավարությունը (դրա իդեալական

մողելը) հնարավորություն է ընձեռում մեղադրանքը կազմակերպել *միայն* մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի ձևով, և որ այդ դատավարությունը բացառում է պետական (պրոֆեսիոնալ) մեղադրանքի կազմակերպումը, *եզրահանգվում է, որ տարածված այդ մտացումը հիմնավոր չէ: Հետազոտության շրջանակներում արվում է այն հետևությունը, որ մեղադրական (մրցակցային) դատավարությունում (դրա իդեալական մողելում) մեղադրանքը հնարավոր է կառուցել ինչպես պետական մեղադրանքի ձևով (բացառելով պետական մեղադրանքի մեղադրանքի կազմակերպման միայն այն ձևը, որտեղ մեղադրելու հնարավորություն ունի դատարանը), այնպես էլ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի ձևով: Այստեղից էլ ուրվագծվում է մեղադրական (մրցակցային) դատավարությունում մասնավոր մեղադրանքի «համեստ», խիստ սահմանափակ տեղը և բացառվում դրա գերակայությունը դատավարության այդ մողելում (տիպում):*

2. Կատարված հետազոտության հիման վրա եզրահանգում է արվում, որ սկզբնապես հանցագործության հանրային իրավական նշանակության գիտակցության բացակայությունը ծնունդ է տալիս մասնավոր մեղադրանքին, ինչն էլ այդ պայմաններում, կարող էր «գործառնվել» *միայն* «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության շրջանակներում ուրվագծած մեղադրական (մրցակցային) դատավարությունում:

Մակայն մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը չի սահմանափակվում միայն մասնավոր մեղադրանքի տեսակով: Ավելին աստիճանաբար հանցագործության հանրային-իրավական նշանակության գիտակցությամբ պայմանավորված ծագում է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի մի նոր տեսակ ժողովրդական մեղադրանքը: Ատենախոսության մեջ եզրահանգում է արվում, թե մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքները՝ մասնավոր ու ժողովրդական մեղադրանքները, պետք է տարանջատվեն ոչ թե հիմք ընդունելով քրեական հետապնդում իրականացող սուբյեկտին, այլ իրականացվող քրեական հետապնդմամբ *ուղղակիորեն պաշտպանվող շահը*: Ըստ այդմ՝ մասնավոր անձի կողմից իրականացվող *մասնավոր մեղադրանքը* դա տուժողի (նրա ընտանիքի անդամների և այլն) կողմից իրականացվող մեղադրանքն է, որն *ուղղակիորեն իրականացվում է* տուժողի (նրա ընտանիքի անդամների) *մասնավոր շահերի պաշտպանության նպատակով*, իսկ ժողովրդական մեղադրանքը հանրության (քաղաքացիների, նրանց միավորումների) կողմից իրականացվող մեղադրանքն է, որն *անմիջականորեն ուղղված է հանրային շահի պաշտպանությանը*: Եվ քանի որ ժողովրդական մեղադրանքն իրականացվում է *անմիջականորեն հանրային շահի* պաշտպանության նպատակով, այստեղ արդեն այն սկզբունքորեն տարբերվում է մասնավոր մեղադրանքից, ժողովրդական մեղադրանքի դեպքում գործ ունենք *մասնավոր անձի կողմից իրականացվող հանրային հետապնդման հետ*:

3.2. Հետազոտության մեջ եզրահանգվում է, որ, թեև հանցագործության մասնավոր-իրավական ընկալումն է ծնունդ տվել մասնավոր մեղադրանքին, այնուամենայնիվ հանցագործության մասնավոր-իրավական ընկալման և մասնավոր մեղադրանքի «կապ» իր հերթին այնքան ամուր չէր, որ առաջինի վերացմամբ վերանար և մասնավոր մեղադրանքը: Հանցագործության մասնավոր իրավական

նշանակությունից դեպի հանցագործության հանրային իրավական նշանակության գիտակցության անցման պայմաններում տեղի է ունենում պատժի նյութական իրավունքի կրողի (տիրոջ) *փոփոխություն*՝ այդ իրավունքը *տուժողից անցնում է պետությանը*: Ինչը, սակայն, չի բացառում քրեադատավարական քաղաքականությունից էլնելով քրեական հայցի նյութական իրավունքի տնօրինումը վերապահել ոչ թե պետական մարմնին (դատախազ), այլ տուժողին: Այս պայմաններում տուժողի մեղադրանքը, թեև իրականացվում է *ուղղակիորեն իր մասնավոր շահերի* ապահովման համար, այնուամենայնիվ դրանով անուղղակիորեն պաշտպանվում է նաև *հանրային շահը*: Այս ամենը հիմք է տալիս փաստելու, որ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքն ընդհանրապես հանցագործության մասնավոր իրավական ընկալման իմանենտ հատկանիշ չէ: Եվ արդեն հանցագործության հանրային իրավական նշանակության գիտակցության պայմաններում *ընդլայնվում են* մասնավոր մեղադրանքի «գործառնության» դատավարական հնարավոր մողելները, այն կարող է տեղ գտնել ինչպես «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության շրջանակներում ուրվագծած մեղադրական (մրցակցային) դատավարությունում, այնպես էլ դատավարության խառը մողելում:

4. Ատենախոսության մեջ «հիմնական» է դիտարկվում այն մասնավոր մեղադրանքը, որտեղ քրեական հետապնդման տնօրինումը (հարուցումը, իրացումը, դադարեցման հարցերը) ամբողջությամբ վերապահված է հանցագործությունից տուժած անձի (նրա մերձավոր ազգականներին և այլն) իրավասությանը կամ գտնվում է նրանից կախվածության (ստորադասության) մեջ: Աշխատության մեջ, առանձնացնելով «հիմնական» մասնավոր մեղադրանքի կազմակերպման երկու ձև՝ «հիմնական» մասնավոր մեղադրանք՝ հանրային (պետական) մեղադրանքի բացակայությամբ և «հիմնական» մասնավոր մեղադրանք՝ «լրացնող» պետական մեղադրանքի զուգակցմամբ, արձանագրվում է, որ հանրային (պետական) մեղադրանքի *բացառումը* և «հիմնական» մասնավոր մեղադրանքի կազմակերպումը «անսահմանափակ» ձևով հնարավոր է *այն դեպքում, երբ բացակայում է հանցագործության հանրային-իրավական նշանակության ընկալումը*: Այսպիսի հետևությունները բխում են նրանից, որ այս դեպքում թե՛ քրեական հայցի, թե՛ պատժելու նյութական իրավունքի տեղը հանդիսանում է հանցագործությունից տուժած անձը, և հետևաբար հանրային (պետական) մեղադրողը չպետք է տեղ գտնի քրեական հետապնդման գործընթացում: Մյուս կողմից՝ հանցագործության հանրային-իրավական նշանակության գիտակցության պայմաններում էլ կարող է տեղ գտնել «անսահմանափակ» «հիմնական» մասնավոր մեղադրանքը: Այս դեպքում, սակայն, *չպետք է բացառվի հանրային (պետական) մեղադրողի մասնակցությունը, որն էլ որպես հետևանք պետք է հանգեցնի «հիմնական» «անսահմանափակ» մասնավոր մեղադրանքի «չեղարկմանը*» (կամ ամբողջությամբ այն վերացնելով այն, կամ առավելագույնը «հիմնական» մասնավոր մեղադրանքը վերածելով «լրացնողի»):

Ինչ վերաբերում է «սահմանափակ» ձևով «հիմնական» մասնավոր մեղադրանքի կազմակերպմանը, ապա, բացի եզակի բացառություններից («մասնավոր դեղիկտի» տեսություն վրա հիմնված «մասնավոր մեղադրանքի գործերի» կառու-

ցումից), այն հետևանք է հանագործության հանրային-իրավական նշանակության գիտակցության (սակայն այդպիսի կազմակերպումը տեղ է գտնում ելնելով տարվող քրեադատավարական քաղաքականությունից): Այս դեպքում որևէ պարագայում չի կարող բացառվել այդ գործերին հանրային (պետական) մեղադրողի մասնակցելու հնարավորությունը:

5. Աշխատանքում «լրացնող» եզրույթով է բնորոշվում հանցանքից տուժողի (նրա մերձավոր ազգականների և այլն) կողմից իրականացվող այն մասնավոր մեղադրանքը, որը ծագում, իրացվում և դադարում է «հիմնական» հանրային (պետական) մեղադրանքին զուգահեռ և գտնվում է նրանից կախվածության (ստորադասության) մեջ:

Աշխատանքում ֆրանսիական և գերմանական ինչպես գործող, այնպես էլ նախկին օրենսդրական կարգավորումների վերլուծության հիման վրա առանձնացվում են «լրացնող» մասնավոր մեղադրանքի մայրցամաքային իրավունքում կազմակերպման երկու «գերմանական» և «ֆրանսիական» մոդելներ. առաջինի դեպքում «լրացնող» մասնավոր մեղադրանքը սահմանափակված է որոշակի հանցագործություններով (գործերով), երկրորդի դեպքում՝ ոչ: Ատենախոսության մեջ, ուսումնասիրելով 1920-ական, 1960-ական թվականների խորհրդային քրեական դատավարության օրենսգրքերում տեղ գտած կարգավորումները, ՀՀ և ՌԴ գործող օրենսդրական կարգավորումները, դոկտրինալ աղբյուրները, արձանագրվում է այն, որ եթե 1920-ականներին տուժողի շահերի շրջանակի ընկալումները հիմնականում սահմանափակվում էր հանցագործության պատճառված վնասի հատուցմամբ, ապա ժամանակի ընթացքում տեղի ունեցան տուժողի շահերի շրջանակի վերընկալումներ: Դրա հետևանքով հայրենական դատավարությունում «տուժող» սուբյեկտը օժտվեց որոշակի իրավունքներով՝ իր, «հարստացված» ընկալումներով շահերը արդյունավետ պաշտպանելու համար: Եվ 1960-ականներից քրեական դատավարության օրենսգրքերով արդեն հանրային մեղադրանքի գործերով տուժողին վերապահված նոր իրավունքներով նրա գործառույթի հարցի վերաբերությամբ առաջացած տարակարծությունները, տեսական բանավեճերը պետք է լուծել հիմք ընդունելով ոչ թե կոնկրետ գործով տուժողի դրսևորած ակտիվ-պասիվ վարքագիծը (տուժողի փաստացի դիրքորոշումը), այլ թե ինչ ուղղվածության իրավունքներով է տուժողն օժտված՝ անկախ կոնկրետ գործով նրա դրսևորած ակտիվությունից: Եվ ըստ այդմ՝ հետագոտության մեջ եզրակացվում է, որ հանրային մեղադրանքի գործերով տուժողն իրականացնում է մեղադրանքի գործառույթ՝ ունենալով լայն իրավունքներ «հիմնական» հանրային (պետական) մեղադրանքի վրա ազդեցություն գործադրելու: Ուստի՝ աշխատանքում եզրահանգում է արվում առ այն, որ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով հանրային մեղադրանքի գործերով տուժողը հանդես է գալիս իբրև «լրացնող» մասնավոր մեղադրող՝ տուժողի կարգավիճակ ձեռք բերելու պահից («լրացնող» մասնավոր մեղադրանքի կազմակերպված է ֆրանսիական մոդելով):

6. Աշխատանքում «սուբսիդիար» է դիտարկվում այն մասնավոր մեղադրանքը, որը ծագում և իրացվում է հանցանքից տուժողի (նրա մերձավոր ազգականների և այլն) կողմից հանրային (պետական) քրեական հետապնդում իրականացնող

մարմնի (քրեական վարույթի մասնակցի) կողմից քրեական հետապնդում չհարուցելու կամ դրանից հրաժարվելու (այն դադարեցնելու) դեպքում:

Հետագոտության մեջ, քննարկման առարկա դարձնելով գիտության մեջ տարակարծությունների առիթ տված հարցը, թե մասնավոր մեղադրանքի այս տեսակի առանձնացումը տեղին չէ, և որ այն կլանվում է մասնավոր մեղադրանքի այլ տեսակներով («լրացնող», «հիմնական» մասնավոր մեղադրանքներ), աշխատանքում փաստակվում է այդպիսի մոտեցման ոչ հիմնավոր լինելը: Մասնավորապես, հետագոտության շրջանակներում նշվում է, որ թեև «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքը հանրային (պետական) մեղադրանքից կախվածության հատկանիշով մոտենում է «լրացնող» մասնավոր մեղադրանքին, սակայն, ընդգծվում է երկու տեսակների մի առանցքային տարբակիչ հատկանիշը, այն է՝ «լրացնող» մասնավոր մեղադրանքը բացի կախվածության հատկանիշից, ունի նաև հանրային (պետական) մեղադրանքի հետ համատեղելիության (զուգահեռության) հատկանիշը: «Սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի դեպքում տրամագծորեն հակառակն է: «Սուբսիդիար» մասնավոր մեղադրանքը անհամատեղելի է հանրային (պետական) մեղադրանքի հետ:

Հետագոտության մեջ անդրադարձ է կատարվում նաև գիտական այն տեսակետին, թե «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքը չպետք է առանձնացնել և այն պետք է դիտարկել իբրև «հիմնական» մասնավոր մեղադրանքի դրսևորում: Աշխատանքում անընդունելի է համարվում այդ մոտեցումը՝ արձանագրելով որ «հիմնական» մասնավոր մեղադրանքի «անկախության», այլ մեղադրանքից «ոչ ստորադասության» հատկանիշը այս պարագայում բացակայում է: Նշվում է, որ «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքը հանրային (պետական) մեղադրանքի հետ անհամատեղելիությունից չպետք է բխեցնել դրանից կախվածության բացակայությունը: «Սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի դեպքում, սակայն, կախվածությունը այլ դրսևորում է ստանում, քան «լրացնող» մասնավոր մեղադրանքի դեպքում. այն դրսևորվում է մինչ հանրային (պետական) մեղադրանքի բացասական ձևով տնօրինումը (քրեական հետապնդման չհարուցումը, դադարեցումը) այս տեսակ մասնավոր մեղադրանքի հարուցման և իրացման ինքնուրույն հետադրության բացակայությամբ: Հիմքը ընդունելով «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի յուրահատուկ, մասնավոր մեղադրանքի այլ տեսակների հետ չ-կրկնվող հատկանիշները՝ առենախոսության մեջ հիմնավորվում է մասնավոր մեղադրանքի այս տեսակի առանձնացումը:

7. Այն բոլոր դեպքերում, երբ հանրային (պետական) մեղադրանքը տնօրինվում է բացասական ձևով (քրեական հետապնդման չհարուցմամբ, մեղադրանքից հրաժարվելով), տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը կարող է կազմակերպվել կամ «սուբսիդիար» մասնավոր մեղադրանք հարուցելու և իրացնելու հնարավորություն նախատեսելով, կամ տուժողին վերապահելով տվյալ դեպքում հանրային (պետական) մարմինների կայացրած որոշումը (քրեական հետապնդում չհարուցելու, մեղադրանքից հրաժարվելու) բողոքարկելու հնարավորություն: Աշխատանքում արձանագրվում է, որ այդ երկու մոտեցումներն էլ թեև ունեն իրենց թեր և դեմ կողմեր, սակայն հավասարապես կիրառելի, ընդունելի

են և տեղ են գտել ինչպես տարբեր երկրների օրենսգրքերում, այնպես էլ ամրագրվել են միջազգային իրավական տարատեսակ փաստաթղթերում: *Ընդ որում՝ արձանագրվում է, թե կոնկրետ որ մոտեցումը որդեգրել, ոչ մի կերպ կախված չէ երկրի քրեադատավարական համակարգի պատկանելիությունից:*

Հետազոտության մեջ, ուսումնասիրելով ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները և այդ կարգավորումներին տրված ՀՀ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները, եզրահանգում է արվում, որ *ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից օրենսդրական նորմերին տրվել են այնպիսի մեկնաբանություններ, որոնցով մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում կախցված դատական ակտը փաստացիորեն դառնում է անբողոքարկելի ինչպես վերադաս դատախազի, այնպես էլ տուժողի կողմից:*

Այս հանգամանքը, զուգակցված գործող օրենսգրքով «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի ինստիտուտի բացակայությամբ, ըստ ատենախոսի, ստեղծվում է մի իրավիճակ, որտեղ տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը ոչ մի կերպ չի ապահովվում: Հետազոտության շրջանակներում այս իրավիճակի հաղթահարման հնարավոր եղանակ է դիտարկվում «սուբսիդիար» մասնավոր մեղադրանքի ներդրումը, որը հնարավորություն կտար մի կողմից պաշտպանել տուժողի իրավունքներն ու օրինական շահերը, մյուս կողմից՝ դատարանին զերծ պահել «դատախազին մեղադրանք պարտադրելու» խնդրից (որը տեղ էր գտնում կայացրած դատական ակտի բողոքարկման մոդելի պայմաններում)՝ այդպիսով իսկ առավելագույնս ապահովելով դատարանի անկողմնակալությունը:

8. Հետազոտության մեջ քրեական դատավարությունում դիսպոզիտիվության դրսևորում դիտարկելով ոչ թե վարույթի յուրաքանչյուր մասնավոր մասնակիցների իրենց ցանկացած իրավունքների իրացումը, այլ՝ միայն այն իրավունքների, որոնցով վարույթի մասնավոր մասնակիցները հնարավորություն են ստանում ընդհանուր առմամբ գործի ընթացքի վրա ազդելու, այսինքն՝ հնարավորություն են ստանում (անվերապահորեն) ազդելու վարույթի ծագման ու դադարեցման վրա, մյուս կողմից՝ տարբերակելով մասնավոր մեղադրանքի «հիմնական», «սուբսիդիար», «լրացնող» տարատեսակները, բացահայտելով դրանց էական հատկանիշները, եզրահանգում է արվում, որ *մասնավոր մեղադրանքի ամեն դրսևորում չէ, որ հանդիսանում է դիսպոզիտիվության դրսևորում:*

Եթե «հիմնական» և «սուբսիդիար» մեղադրանքների դեպքում գործ ունենք դիսպոզիտիվության դրսևորումների հետ, ապա *մասնավոր մեղադրանքի մեկ այլ տեսակի՝ «լրացնող» մասնավոր մեղադրանքի դեպքում՝ դիսպոզիտիվությունը բացակայում է: Հետևաբար եզրահանգվում է, որ քրեադատավարադիտությունում տարիներ շարունակ տարվող մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության միջև օրգանական, անխզելի կապը, իրականում թվացյալ է: Արձանագրվում է, որ մասնավոր մեղադրանքը կարող է տեղ գտնել ինչպես դիսպոզիտիվության, այնպես էլ հանրայնության սկզբունքի գործունեության պայմաններում:*

9. Աշխատանքում, մի կողմից տարբերակելով մասնավոր մեղադրանքի տեսակները, մյուս կողմից առանձնացնելով «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող չորս տեսություններն և դրանցից յուրաքանչյուրից

բխող հետևություններն անելով, եզրահանգում է արվում, որ թեև մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտները միմյանց հետ կարող են փոխկապակցվել (իսկ, օրինակ, «մասնավոր դելիկտի» տեսության դեպքում դրանք միախուսվում են), այնուամենայնիվ դրանք միմյանցից *անկախ ինստիտուտներ են:* Թեև իրավաբանական գրականության մեջ այս հարցը որոշակիորեն շոշափվել է, սակայն ուղիղ եզրահանգում այս առումով հստակորեն չի արվել, ըստ այդմ ատենախոսության մեջ արվում է եզրահանգում առ այն, որ *«հանրային մեղադրանքի գործերով» հնարավոր է մասնավոր մեղադրանք և հակառակը՝ «մասնավոր մեղադրանքի գործերով» հանրային մեղադրանք:*

10. Աշխատանքում քննադատական վերլուծության են ենթարկվում մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող չորս տեսություններից երկուսը՝ «մասնավոր դելիկտի» և «իդեալական արժեքի» տեսությունները, նշվում է, որ դրանք կորցրել են իրենց արդիականությունը և ունեն «բավականին արատներ»: Ուստի՝ մերօրյա ժամանակներում «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը կարող է տեղ գտնել կոնկրետ քրեադատավարական համակարգում՝ հիմնվելով միայն «տուժողին զթալու» և/կամ «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսությունների գաղափարների ու դրանցից բխող հետևությունների վրա:

Հետազոտելով գործող օրենսդրական կարգավորումները, արձանագրում է, որ օրենսդրական առկա կարգավորումները այնպիսին են, որ դրանք կարող են տեղ գտնել *միայն* մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը *«տուժողին զթալու» տեսության գաղափարների վրա կառուցելու դեպքում* (քանի որ կարգավորումները համապատասխանում են տեսությունից բխող հետևություններին): Ընդ որում՝ արձանագրվում է, որ այդպիսի կարգավորումները հնարավոր են «տուժողին զթալու» տեսության միայն մի հիմքով, այն է՝ տուժած անձի և նրա հարազատների հարաբերություններին գործի (հետապնդման) հարուցմամբ և իրականացմամբ պատճառվելիք վնասը կանխելու հիմքով գործերի (հանցագործությունների) առանձնացման դեպքում: Հետազոտության մեջ, սակայն, նկատվում է, որ մասնավոր մեղադրանքի գործերի ՀՀ քր.դատ.օր-ով նախատեսված շրջանակում ընդգրկված են նաև այնպիսի հանցագործություններ, որոնց նախատեսումը ակնհայտորեն պայմանավորված չի եղել հանցանքից տուժած անձի և նրա հարազատների հարաբերությունները պահպանման նպատակով: Ուստի՝ եզրահանգում է արվում, որ գործող օրենսդրական կարգավորումները, այս հարցով որոշակի փոփոխման կարիք ունեն: Ըստ այդմ՝ առաջարկվում է ՀՀ քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված գործերի շրջանակը «նեղացնել»՝ համապատասխանեցնելով «տուժողին զթալու» տեսության էությունը. հանել այն հանցանքները, որոնք չեն բխում այս տեսության էությունից, միաժամանակ նաև քր.դատ.օր-ում նշում անել այն մասին, որ այս գործերի յուրահատուկ կարգը (բողոքը հետ վերցնելու իրավունք, բողոքի երկատելիությունը և այլն) պետք է գործի *միայն* տուժողի հարազատների կատարած ենթադրյալ հանցավոր արարքների դեպքում:

Իրրև հարցի լուծման այլ տարբերակ առաջարկվում է ՀՀ քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված գործերի շրջանակը պահպանել, սակայն այդ դեպքում

արդեն «տուժողին գթալու» տեսությունից «դուրս» գտնվող, դրա գաղափարների հետ չհամընկնող գործերի (հանցագործությունների) վրա տարածել արդեն ընդունելի մյուս տեսության, այն է՝ «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսության գաղափարները և դրանից բխող հետևությունները: Այս դեպքում արդեն թեև մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը կմնա նույնը, բայց կփոխվի դրանցով վարույթի (հետապնդման) կազմակերպման կարգը՝ կազմակերպվելով արդեն «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսությունից բխող հետևությունների վրա (բացառելով բողոքը հետ վերցնելը, բողոքի երկատելիությունը, մեղադրանքի փոփոխությամբ հանրայինից մասնավոր մեղադրանքի գործի փոխակերպման դեպքում քրեական վարույթի (հետապնդման) դադարեցումը տուժողի բողոքի բացակայության դեպքում և այլն):

Հարցի այդօրինակ լուծման դեպքում, փաստորեն, պետք է ստեղծվի մասնավոր մեղադրանքի գործերի երկու առանձին շրջանակ՝ ամեն մեկն իր տարբերակված կանոնակարգումներով:

11. Աշխատանքում հետազոտելով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի հեղինակը եզրահանգում է, որ այդ գործերով փաստացիորեն մինչ տուժած անձի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելը հանցագործության մասին խոսք լինել չի կարող: Այս ամենի, ինչպես նաև ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի դրույթների վերլուծության հիման վրա արձանագրվում է, որ մասնավոր մեղադրանքի գործերի վարույթի կազմակերպումը «խիստ մոտենում» է «մասնավոր դեյլիկտի» հնացած տեսության գաղափարներից բխող հետևություններին:

Մյուս կողմից, սակայն, աշխատանքում ենթադրություն է արվում, թե այդպիսի իրավիճակ առաջացել է ոչ թե օրենսդրի նպատկատուողված, մասնավոր մեղադրանքի գործերը հենց «մասնավոր դեյլիկտի» տեսության շրջանակներում մոդելավորելու գիտակցված ցանկությամբ, այլ՝ ակամայից, ոչ նպատկատուողված գործունեության արդյունքում: Ավելին՝ ելնելով քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում ամրագրված ձևակերպումներից արձանագրվում է, որ իրականում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով օրենսդիրը ունեցել է նպատակ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կազմակերպել բոլորովին այլ՝ «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսության և դրանից բխող հետևությունների հիման վրա:

Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի կազմակերպման նոր օրենսգրքի մոդելում որոշակի համակարգային խնդիրներ են արձանագրվում: Նախ նկատվում է, որ նախատեսվող մոդելում տուժողի վրա դրվում է մեղադրանքի պաշտպանության բեռ, միաժամանակ բացակայում են տուժողի շահերի պաշտպանության ուղղված կարգավորումներ, այս գործերով վարույթը շարունակվում է կազմակերպվել «խառը» տիպի դատավարության տրամաբանությամբ, ըստ այդմ գործում են այնպիսի դատավարական կարգավորումներ, ինչպիսիք են, օրինակ, favor defensionis դատավարական կառուցվածքը (իր բոլոր դրսևորումներով), որոնք պետք է տեղ գտնեին ապրիորի երկու անհավասար կողմերի (պետական մարմիններ-մեղադրյալ) և ոչ թե երկու հավասարների (տուժող-մեղադրյալ)

դեպքում: Աշխատության մեջ արձանագրվում է, որ այդ մոդելում նշված գործերով դատավարության տիպի տարբերակում չնտցնելը, յուրաքանչյուր դեպքում տուժողի՝ մեղադրանքի պաշտպանության հնարավորությունները գնահատելու մեխանիզմների փաստացի բացակայությունը, այդ գործերով favor defensionis դատավարական կառուցվածքի (իր բոլոր դրսևորումներով) ամկայությունը, մասնավոր մեղադրանքի գործերի (հանցագործությունների) շրջանակում նույնիսկ պրոֆեսիոնալ իրավաբանների համար խիստ բարդ ապացուցելի հանցագործությունների ընդգրկումը, հանգեցնում է նրան, որ տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար ստեղծվում են ըստ էության «անհաղթահարելի դժվարություններ»:

Վերլուծության արդյունքում առաջարկվում է երկու հնարավոր լուծում. կամ այս գործերով վերացնել նոր քր.դատ.օր-ով առաջարկվող մեղադրանքի կազմակերպման մոդելը, և մեղադրանքը կազմակերպել ոչ թե հիմնական մասնավոր մեղադրանքի, այլ պետական (հանրային) մեղադրանքի կարգով, կամ պահպանել մեղադրանքի կազմակերպման նոր քր.դատ.օր-ի մոդելը՝ այս դեպքում, սակայն, առաջարկվում է տարբերակել վարույթը, այն կառուցելով մեղադրական (մրցակցային) տիպի դատավարության ձևով: Բացի այդ նշվում է, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվող մոդելը թողնելու դեպքում էլ պետք է մասնավոր մեղադրանքի գործերի (հանցագործությունների) շրջանակը նեղացնել՝ այնտեղ ներառելով համեմատաբար «հեշտ ապացուցելի» հանցագործություններ: Մյուս կողմից, բոլոր այն դեպքերում, երբ մասնավոր մեղադրանքի գործերով ինչ-ինչ պատճառով վարույթի հանրային մասնակիցները հարուցել են քրեական վարույթ (հետապնդում), ապա պետք է այն շարունակելու հնարավորություններ նախատեսել, քանի որ հակառակ պարագայում առաջանում է հանրային ռեսուրսների անհարկի վատնման վտանգ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների նշանակությունն այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի ինստիտուտների հիմնահարցերի վերհանմանն ու դրանց լուծման ուղիների քննարկումը նվիրված համալիր աշխատանք: Ատենախոսության մեջ արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է քրեական դատավարության մոդելներին, մրցակցային դատավարությունում մեղադրանքի կազմակերպմանը, մասնավոր մեղադրանքին, «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտին: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության մեջ, նպաստել դատական պրակտիկայի զարգացմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ՀՀ ռատիկականության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքերն արտացոլվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Ատենախոսության մի

շարք դրույթներ ատենախոսի կողմից ներկայացվել են զեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 զլուխներից, դրանցում ընդգրված 12 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին զլուխը՝ «Մեղադրանքի կազմակերպման տեսական հնարավորությունները իդեալական մեղադրական (մրցակցային) դատավարությունում» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Առաջին զլխի առաջին պարագրաֆում՝ «Մեղադրական (մրցակցային) քրեական դատավարության երկու տեսությունների առանձնացման նպատակը և դրանց հիմնական բնութագրիչ գծերը» վերտառությամբ, *հիմք ընդունելով* մեղադրական (մրցակցային) դատավարության վերաբերությամբ գիտության մեջ արտահայտած տարբեր մոտեցումները, առանձնացնում է մեղադրական (մրցակցային) տիպի դատավարության կազմակերպման երկու տարբեր, մեկը մյուսին ըստ էության հակադրվող տեսություններ: Ընգծվում է, որ դրանցից յուրաքանչյուրում մեղադրական (մրցակցային) դատավարությունը բոլորովին այլ պատկեր է ստանում. այլ են դառնում դատավարության առարկան, տարբերվում է կողմերի՝ այդ առարկան տնօրինելու իրավասությունը, դատարանի ինքնուրույն գործելու հնարավորությունները (դատարանի ակտիվությունը/պասիվությունը), այլն են ապացուցման նպատակը, ապացուցման սուբյեկտները և այլն:

Առաջին զլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության թույլ կողմերը և դրանց հաղթահարման ուղիները» վերտառությամբ, *ի մի են բերվում տեսության ընդդիմախոսների նշված այն խոչընդոտները, որոնք, հնարավոր է, ի հայտ գան դատավարությունը «մեղադրական (մրցակցային) ձևի և բովանդակության միահյուսման» տեսության գաղափարների վրա կառուցելու պարագայում, և առաջարկվում են այդ խոչընդոտներից յուրքանչյուրի հաղթահարման ուղիներ: Ըստ այդմ հերքվում է գիտության մեջ հարյուր հիսուն տարուց ավելի գոյություն ունեցող այն մոտեցումը, թե մեղադրական (մրցակցային) դատավարությունը (դրա իդեալական մոդելը) հնարավորություն է ընձեռում մեղադրանքը կազմակերպել *միայն* մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի ձևով:*

Երկրորդ զլուխը՝ «Մասնավոր մեղադրանքը իբրև մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակ, դրա տեսակներն ու նշանակությունը» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

Երկրորդ զլխի առաջին պարագրաֆում, որը կրում է «Մասնավոր և ժողովրդական մեղադրանք (մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի երկու տեսակի տարբերակում)» վերնագիրը, քննարկվում է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի երկու տեսակի՝ ժողովրդական և մասնավոր մեղադրանքի հարաբերակցության հարցը, առաջարկվում է մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքների այս տեսակների տարբերակման հիմքը:

Երկրորդ զլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր մեղադրանքի տեսակները» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում մասնավոր մեղադրանքի «հիմնական», «լրացնող» և «սուբսիդիար» տեսակները, բացահայտվում են դրանցից յուրքանչյուրի հատկանիշներ, քննարկման առարկա դարձվում տեսական և գործնական բնույթի մի շարք այլ հարցեր:

Երկրորդ զլխի երրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության «օրգանական» կապը» վերնագրով քննարկվում է մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության «օրգանական», «անխազելի» կապի առկայության հարցը՝ քննադատական վերլուծության ենթարկելով խորհրդային և հետխորհրդային դատավարագիտության մեջ այս առումով կարծրացած մոտեցումները:

Երկրորդ զլխի չորրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր մեղադրանքի նշանակությունը» վերտառությամբ, բացահայտվում է մասնավոր մեղադրանքի հոգեբանական հիմնավորվածությունը, ինչպես նաև մասնավոր մեղադրանքի նշանակությունը դիտարկվում է նաև պետական մեղադրանքի մենիշխանության չեզոքացման, իրականացվող քրեական հետապնդման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Երրորդ զլուխը՝ «Մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող տեսությունները և դրանից բխող հետևությունները» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երրորդ զլխի առաջին պարագրաֆը՝ «Մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող նյութաիրավական տեսություններ» վերտառությամբ, նվիրված է մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող նյութաիրավական տեսությունների «մասնավոր դելիկտի» և «իդեալական արժեքի» տեսությունների ուսումնասիրությանը, ինչպես նաև այդ տեսություններից յուրքանչյուրի էությունից բխող հետևություններին:

Երրորդ զլխի երկրորդ պարագրաֆը՝ «Մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող դատավարական տեսությունները» վերտառությամբ նվիրված է մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող «տուժողին զբալու» և «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսությունների ուսումնասիրությանը, ինչպես նաև աշխատանքի այդ մասում արվում են այդ տեսություններից յուրքանչյուրի էությունից բխող հետևություններ:

Երրորդ զլխի երրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր դելիկտի» և «Իդեալական արժեքի» տեսությունների քննադատական վերլուծությունը և որոշակի միջանկյալ եզրահանգումներ» վերտառությամբ, քննադատական վերլուծության են ենթարկվում «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող նյութաիրավ-

վական տեսությունները և այդ լույսի ներքո եզրակացվում է, որ ներկա ժամանակներում չպետք է մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կազմակերպել այդ տեսությունների և դրանցից յուրաքանչյուրից բխող հետևությունների վրա:

Երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցությունը՝ վերնագրով, քննվում են երկու ինստիտուտների՝ «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցության հարցերը՝ արձանագրելով դրանցից յուրաքանչյուրի ծագումնաբանության (ծագման հիմքերի), նպատակների, ծագման ժամանակաշրջանի տարբերությունները, եզրահանգում է արվում առ այն, որ այդ ինստիտուտները մեկը մյուսից անկախ են, այդ լույսի ներքո քննադատական վերլուծության է ենթարկելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թ. մարտի 30-ի ԵԱԲԴ/0217/01/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշումը:

Չորրորդ գլխի՝ «Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող տեսությունների իմպլեմենտացիան քրեական դատավարության գործող օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգվորումներում՝ վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Չորրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող տեսությունների արտացոլումը քրեական դատավարության գործող օրենսգրքի կարգվորումներում՝ վերտառությամբ, ելնելով հետազոտության երրորդ գլխում կատարված հետևություններից, վերլուծվում են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի կազմակերպման կարգավորումները, եզրահանգվում է, որ այդ կարգավորումները համապատասխանում են «տուժողին զբալու» տեսությունից բխող հետևություններից, միաժամանակ արվում են համապատասխան առաջարկություններ գործող օրենսգրքի բարելավման ուղղությամբ:

Չորրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգվորումներում «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող տեսությունների արտացոլումը և ներդրվող մոդելով այդ շրջանակի գործերով վարույթի կազմակերպման հիմնախնդիրները՝ վերտառությամբ, բացահայտվում է, թե նոր օրենսգրքի կարգավորումներումնախնդրում առավելապես որ տեսությունների հետևություններն են տեղայնացված, քննադատական վերլուծության են ենթարկվում նոր քրեական դատավարության օրենսգրքում այս առումով տեղ գտած կարգավորումները, ինչպես նաև արվում են առաջարկներ նոր օրենսգրքի քննարկվող հարցի առնչությամբ բարելավելու համար:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Մասնավոր մեղադրանքի նշանակությունը կարելի է դիտարկել տարբեր հարթություններում: Մի դեպքում մասնավոր մեղադրանքը, որով տուժողը հնարավորություն է ստանում «արձագանքելու» իրեն պատճառված չարիքին, հանդի-

սանում է չարիքին «արձագանքման» վատթարագույն ձևի՝ ինքնադատաստանի չեզոքացման միջոց: Երկրորդ հարթությունում պետք է ընդգծել մասնավոր մեղադրանքը կարող է հանդիսանալ պետական մեղադրանքի մեկիշխանության և, որպես հետևանք, պետական մեղադրանքը քաղաքականապես չեզոքացնելու միջոց: Երրորդ հարթությունում՝ մասնավոր մեղադրանքը հանդիսանում է ընդհանրապես իրականացվող քրեական հետապնդման արդյունավետությունը էլ ավելի բարձրացնելու միջոց:

2. «Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող «մասնավոր դելիկտի» տեսության առաջ քաշած գերզադափարը, ըստ որի որոշ հանցագործություններով հասարակական կարգը չի խախտվում, հանրային շահը չի վնասվում (կամ գրեթե չի վնասվում), և վնասում են (առավելապես վնասում են) հանցանքից տուժողի մասնավոր շահերը, հետևաբար հանցանքին հետևող պատիժը իբրև (առավելապես իբրև) «տուժողին բավարարելու միջոց» դիտարկելը մեր օրերում խիստ խնդրահարույց է: Ավելին՝ սույն տեսության գաղափարների առավել հետևողական զարգացման արդյունքում արվել է եզրահանգում առ այն, թե նշված հանցագործություններով քրեաիրավական հարաբերությունները ծագում են հանցանք կատարած անձի և տուժողի միջև: Մակայն հանցագործությամբ հանրային շահ չվնասվելը (գրեթե չվնասումը) չի համապատասխանում ներկա ժամանակների հանցագործության հանրորեն վտանգավոր արարք լինելու պատկերացումներին: Մեր օրերում հանցանքի հանրային վտանգավորության հատկանիշը (հետևաբար և դրանով հանրային շահը վնասվելու հանգամանքը) գրականության մեջ դիտարկվում է իբրև «կասկած չհարուցող», իբրև արարքի քրեականացման հիմք (սկզբունք)՝ միաժամանակ ընդդեմով այս հարցում հանրային վտանգավորության «բացառիկ բնույթը»: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ արարքը «չի վնասում» կամ «գրեթե չի վնասում» հանրային շահը, այդ արարքը *ոչ թե պետք է ընդգրկվի «մասնավոր մեղադրանքի գործերի» շարքում, այլ՝ ապաքրեականացվի*: Ուստի կարծում ենք, որ անթույլատրելի է մեր ժամանակներում այս տեսության գաղափարների վրա կառուցել մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը և տեսությունից բխող հետևությունները ամրագրել քրեական դատավարության օրենսգրքում:

3. «Մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը հիմնավորող «փղեալական արժեքի» տեսությունը այս շրջանակի գործերի առանձնացումը հիմնավորում է նրանով, որ կան այնպիսի արժեքներ, որոնց հանդեպ կատարված ոտնձգությունը հանցավոր համարել-չհամարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հանցանքից տուժածի ներքին ընկալումները: Եվ պետությունը (պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք) պետք է կարողանա «ներխուժել անձանց ներքին կյանք»՝ ճշտորեն որոշելու, թե այդ արժեքի վնասում եղն է, թե՞ ոչ (որպեսզի պարզվի կատարված արարքը հանցավոր է, թե՞ ոչ): Մակայն ընդգծվում է այն գաղափարը, որ պետությունը չունի այդպիսի «նորր զգայարաններ», որ առանց տուժողի հնարավոր լինի որոշել այդ «փղեալական արժեքների» վնասման առկայությունը: Ուստի տեսության շրջակներում այդ գործերով տուժողի բողոքը դիտարկվում է իբրև «փղեալական արժեքի» վնասման ցուցիչ և ըստ այդմ ա-

րարքը հանցավոր դարձնող հանգամանք(տարր), այսինքն՝ հանցավորության (պատժելիության) տարր: Հետազոտության ընթացքում, ընդգծվում է այն, որ այս տեսությունը նույնպես ունի առանցքային թերություններ, մասնավորապես, էթե տեսությունը փորձ է անում բացատրել, թե ինչու պետք է տուժողի ընկալումները խիստ կարևոր համարել արարքը հանցավոր գնահատելու հարցում, ապա այն *ոչ մի կերպ չի պատասխանում հարցին, թե ինչու է պետք, որ տուժողի այդ ընկալումը արտահայտվի միայն բողոքով* և ինչու հնարավոր չէ ամեն անգամ հարուցել քրեական վարույթ և հարուցված վարույթի ընթացքում տուժողից այլ եղանակներով (օրինակ՝ հարցաքննելով նրան, նրա հարազատներին, տուժողի օրագրերը գննելով և այլն) պարզել նրա «խղեալական արժեքի» վնասման առկայությունը, հետևաբար՝ հանցագործության առկայություն-բացակայությունը: Երկրորդ հիմք ընդունելով գրականության մեջ այս առումով տեղ գտած իրավացի դիրքորոշումը, նշվում է, որ էթե տուժողի բողոքը տեսության շրջանակներում դիտարկվում է իբրև արարքը հանցավոր դարձնող հանգամանք (տարր), ապա թերևս պետք է այն իբրև տարր ներառվեր համապատասխան հանցագործության կազմում: Մակայն դա էլ իր հերթին հակասության մեջ կմտնեք հանցակազմի ժամանակակից կառուցվածքի հետ, որը կապում է բոլոր տարրերը հանցագործության կատարման *ժամանակի* հետ: Իսկ անհա տուժողի կարծիքը արարքը կատարվելու պահից մինչ բողոք ներկայացնելու պահը կարող է էականորեն փոխվել: Այս ամենի հիման վրա, եզրահանգում է արվում, որ անթույլատրելի է մեր օրերում այս տեսության գաղափարների վրա կառուցել մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը և տեսությունից բխող հետևությունները ամրագրել քրեական դատավարության օրենսգրքում:

4. *«Տուժողին զթալու» տեսության* շրջանակներում «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի գոյությունը հիմնավորում է նրանով, որ որոշ հանցագործություններով իրականացվող քննությունն ու քրեական հետապնդումը կարող են ավելի մեծ վնաս հասցնել տուժողին (նրա ընտանիքի անդամներին), *քան հանցագործությամբ նրան պատճառված վնասն է*: Տվյալ դեպքերում փաստացի տեղի է ունենում երկու **շահերի**՝ ենթադրյալ հանցագործությունով վարույթ իրականացնելու (քրեական հետապնդում հարուցելու) հանրային **շահի** և վարույթ չհարուցելու (այն չհետապնդելու) տուժողի մասնավոր **շահի** հակադրություն: Այստեղ պետությունը «զիջում է» հանրային **շահի** ապահովման համար քրեական հետապնդում հարուցելու (իրացնելու) իր «իրավունքը» հանուն տուժողի **շահերի** պաշտպանության: Տեսության շրջանակներում հստակորեն արձանագրվում է «մասնավոր մեղադրանքի գործերի» անկախ բողոքի առկայությունից հանցագործություն լինելու հանգամանքը (արձանագրվում է հանրային **շահի** վնասումը) և «արարքի հանցավոր լինել-չլինելը» չի պայմանավորվում տուժողի ընկալումներով: Արձանագրում է, որ՝ Ա) տեսության շրջանակներում տուժողի բողոքը դիտարկվում է ոչ թե իբրև արարքի հանցավորության (պատժելիության) պայման (հանգամանք), այլ՝ *քրեական վարույթի (հետապնդման) հարուցման պայման*: Ուստի ընգծվում է տեսության շրջանակներում տուժողի բողոքի դատավարական բնույթը, և եզրահանգում է արվում, որ նշված տեսության գաղափարների հիման վրա «մասնա-

վոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը կառուցելու դեպքում այդ գործերի շրջանակը պետք է նախատեսվի ոչ թե քրեական, այլ՝ *քրեական դատավարության օրենսգրքով*: Բ) Ընդգծվում է, որ այս շրջանակներում տուժողի բողոքը ստանում է *ոչ թե «դրական», այլ «բացասական» երանգ*. այն միջոց է ոչ թե քրեական հետապնդում իրականացնելու, այլ քրեական հետապնդման իրականացմանը (հարուցմանը) *խոչընդոտելու, քրեական հետապնդման հարուցումը արգելակելու, քրեական հետապնդման հարուցման վրա «վետո դնելու»*: Այս հանգամանքի հաշվառմամբ էլ եզրակացվում է թե մեղադրանքից պետք է տարանջատվի տուժողի «բողոքի», *մեղադրանքից հրաժարվելուց էլ՝ «բողոքը հետ վերցնելու»* իրավունքները: Հետազոտության շրջանակներում մեղադրանքից «բողոքի» և մեղադրանքից հրաժարվելուց «բողոքը հետ վերցնելու» իրավունքների տարանջատվածությունից բխեցվում է, որ նույնիսկ, երբ քրեադատավարական քաղաքականությունից ելնելով «մասնավոր մեղադրանքի գործերով» մեղադրանքը կազմակերպվի «հիմնական» մասնավոր մեղադրանքով մասնավոր մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարումը, *չպետք է ամեն դեպքում դիտարկվի իբրև «բողոքը հետ վերցնել»* (եթե մասնավոր մեղադրողը ուղղակիորեն այդպիսի հայտարարություն չի արել): Այս դեպքում մեղադրանքից հրաժարվելը կարող է վկայել *մեղադրանքի ինքնուրույն իրականացումից հրաժարվելու* և ոչ թե տուժողի «բողոքը հետ վերցնելու» մասին: Սրանից ելնելով ընդգծվում է, որ հնարավոր է մեղադրանքից հրաժարում «բողոքը հետ վերցնելու» բացակայության պայմաններում, որն էլ որպես հետևանք պետք է առաջ բերի նշված *գործերով* վարույթի պարտադիր շարունակությունը հանրային հետապնդման կարգով, էթե համակարգը կառուցված է քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի վրա: Իսկ էթե համակարգը կառուցված է քրեական հետապնդման հարուցման նպատակահարմարության սկզբունքի վրա, ապա այդ դեպքում վարույթի շարունակության նպատակահարմարության հարցը պետք է որոշվի դատախազի (հանրային մասնակցի) կողմից:

5. Հետազոտությունում տարանջատվում է «տուժողի զթալու» տեսության շրջանակներում «մասնավոր մեղադրանքի գործերի» առանձնացման երկու ինքնուրույն հիմք (ճյուղ): Առաջինը քրեական վարույթի հարուցմամբ *անմիջականորեն հանցանքից տուժած անձին պատճառվելիք հնարավոր վնասը կանխելն է*, երկրորդը հիմքը *տուժած անձի և նրա հարազատների հարաբերություններին* վարույթի (հետապնդման) հարուցմամբ և իրականացմամբ հնարավոր պատճառվող վնասը կանխելն է: Շեշտվում է, որ տեսության շրջանակներում մասնավոր մեղադրանքի գործերի առանձնացման այս երկու հիմքերի տարանջատումն ունի առանցքային նշանակություն և եզրահանգվում, որ կախված նրանից, թե որ հիմքով են այդ գործերը առանձնացվել տրամագծորեն այլ լուծում պետք է ստանան առանցքային նշանակություն ունեցող այնպիսի հարցերի լուծումներ, ինչպիսիք են *տուժողի կողմից բողոքը հետ վերցնելու, բողոքի երկատելիության, ինչպես նաև հանրային հետապնդման գործից մասնավորի «վերաճելու» դեպքում վարույթի հետագա ընթացքի հարցերը*:

6. ՀՀ գործող քր.դատ.օր-ի դրույթների վերլուծության հիման վրա ատենախոսության մեջ եզրահանգում է արվում առ այն, որ օրենսդրական առկա կարգա-

վորումները այնպիսին են, որ դրանք կարող են տեղ գտնել *միայն* «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտը «տուժողին գթալու» տեսության գաղափարների վրա կառուցելու դեպքում: Ընդ որում արձանագրվում է, որ այդպիսի կարգավորումները հնարավոր են «տուժողին գթալու» տեսության միայն մի հիմքով, այն է՝ տուժած անձի և նրա հարազատների հարաբերություններին գործի (հետապնդման) հարուցմամբ և իրականացմամբ պատճառվելիք վնասը կանխելու հիմքով գործերի (հանցագործությունների) առանձազման դեպքում: Մինևույն ժամանակ, սակայն, արձանագրվում է այն, որ «մասնավոր մեղադրանքի գործերի» քր.դատ.օր-ով առանձնացված շրջանակում տեղ են գտել այնպիսի հանցագործություններ, որոնց նախատեսումը ակնհայտորեն պայմանավորված չի եղել հանցանքից տուժած անձի և նրա հարազատների հարաբերությունների պահպանման նպատակով: Ուստի առաջարկվում է երկու հնարավոր լուծում. կա՛մ փոփոխել օրենսդրական գործող կարգավորումները, «նեղացնել» քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված գործերի շրջանակը՝ դրանց շարքից հանելով այն հանցանքները, որոնք չեն բխում այս տեսության էությունից, միաժամանակ նաև քր.դատ.օր նշում անելով, որ այս գործերի յուրահատուկ կարգը (բողոքը հետ վերցնելու իրավունք, բողոքի երկատելիությունը և այլն) պետք է գործի *միայն* տուժողի հարազատների կատարած ենթադրյալ հանցավոր արարքների դեպքում, կա՛մ պահպանել 22 քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված գործերի շրջանակը, սակայն այդ դեպքում արդեն «տուժողին գթալու» տեսությունից «դուրս» գտնվող, դրա գաղափարների հետ չհամընկնող գործերի (հանցագործությունների) վրա տարածել «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսության գաղափարները և դրանից բխող հետևությունները:

7. Նոր քր.դատ.օր-ով նախատեսվող մոդելում հանցագործությունից տուժած անձը հայտնում է խիստ անբարենպաստ վիճակում: Այստեղ նախատեսված չեն կառուցակարգեր, որոնցով հնարավոր լինի հաշվի առնել տուժողի մեղադրանքը (քրեական հայցը) պաշտպանելու ունակությունն ու հնարավորությունները: Տուժողի վրա առանց տարբերակման դրված մեղադրանքի (քրեական հայցի) պաշտպանության պարտականությունը (ինչ դրվում է հանրային մեղադրանքի գործերով իրավաբան դատախազի վրա) խիստ խնդրահարույց է: Եվ հաշվի առնելով այն, որ Ա) տուժողները, ովքեր դեպքերի մեծամասնությամբ չեն ունենա մասնագիտական իրավական գիտելիքներ, նոր քր.դատ.օր-ով նախատեսված մեծաթիվ դեպքերում վերջինիս գործունեությանը հակադրվելու է պաշտպանության կողմը, որում հանդես է գալու պրոֆեսիոնալ իրավաբանը (պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքեր), Բ) մասնավոր մեղադրանքի գործերի շարքում այնպիսի հանցանքներ է նախատեսվում ներառել, որոնք նույնիսկ պրոֆեսիոնալ իրավաբան քննիչի, դատախազի կողմից խիստ դժվար ապացուցելի են, Գ) մասնավոր մեղադրանքի գործերով վարույթում պահպանվել է favor defensionis դատավարական կառուցվածքը, որն արդեն այս դեպքում սկսելու է կատարելու ոչ թե իր նշանակությանը համահունչ՝ դատավարության անհավասար կողմերը փաստացի հավասարեցնելու» դեր, այլ հակառակը՝ ի սկզբանե հավասար կողմերին անհա-

վասար դարձնելու՝ լրացուցիչ հավելյալ իրավունքուններ ու երաշխիքներով օժտելով պաշտպանության կողմին:

Նոր քր.դատ.օր-ի այսօրինակ կարգավորումները տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար ստեղծում են ըստ էության «անհաղթահարելի դժվարություններ», ուստի կա՛մ պետք է այս գործերով վերացվի նոր քր.դատ.օր-ով առաջարկվող մեղադրանքի կազմակերպման մոդելը և մեղադրանքը կազմակերպվի ոչ թե «հիմնական» մասնավոր մեղադրանքի, այլ «հիմնական» պետական (հանրային) մեղադրանքի կարգով, կա՛մ, եթե որոշվում է պահպանել մեղադրանքի կազմակերպման նոր քր.դատ.օր-ով նախատեսվող մոդելը, տարբերակված վարույթում տեղ գտած կանոնակարգումները պետք է փոփոխվեն տարբերակված վարույթում վերացնելով favor defensionis դատավարական կառուցվածքը (իր բոլոր դրսևորումներով), նեղացվեն մասնավոր մեղադրանքի գործերը այնտեղ ներառելով համեմատաբար «հեշտ ապացուցելի» հանցագործություններ, բացի այդ պետք է նախատեսվեն տուժողի՝ մեղադրանքը (քրեական հայցը) պաշտպանելու ունակությունն ու հնարավորությունները գնահատելու կառուցակարգեր՝ դրանց բացակայության դեպքում ապահովելով վարույթի հանրային մասնակցի (դատախազ) ներգրավումը վարույթին:

8. Հետազոտության շրջանակներում արձանագրվում է, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգով հռչակված «գործի քննության ծանրությունը» դատարան տեղափոխելու, նախնական քննությունը բեռնաթափելու նպատակին հասնելու տեսանկյունից նոր քր.դատ.օր-ով նախատեսվող մոդելը նույնպես խնդրահարույց է: Մասնավորապես՝ Ա) «մասնավոր մեղադրանքի գործերի» ընտրված շրջանակում տեղ են գտել այնպիսի հանցագործություններ, որոնցով դեպքերի մեծամասնությունը «պահանջում է» վարույթի հարուցում հանրային կարգով (տեղ է գտնելու նախաքննությունը), և միայն հարուցված գործի շրջանակներում է փաստվելու, որ կոնկրետ դեպքում առկա է ոչ թե հանրային, այլ մասնավոր մեղադրանքով հետապնդվող արարք: Այսինքն՝ ընտրված են այնպիսի հանցանքներ, որոնց առկայության մասին կարելի է խոսել միայն այլ հանցանքների կատարման փաստը հերքելուց հետո: Բ) Օրենսդիրը մասնավոր մեղադրանքի գործերով աներաժեշտ պայման դիտարկելով ենթադրյալ հանցանք կատարած անձի հայտնի լինելը (նոր քր.դատ.օր-ի 451-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ) և նրա անհայտ լինելու դեպքում սահմանելով մինչդատական վարույթի իրականացման հնարավորություն ենթադրյալ հանցանք կատարած անձին հայտնաբերելու նպատակով (նոր քր.դատ.օր-ի 451-րդ հոդվածի 5-րդ մաս) քրեական հետապնդման ենթակա ենթադրյալ հանցանք կատարած անձի ի հայտ գալը դիտարկում է իբրև քրեական վարույթի կարճման հիմք (նոր քր.դատ.օր-ի 13-րդ հոդվածի 5-րդ մաս), այսինքն՝ հանցանք կատարած անձին հայտնաբերելու դեպքում վարույթը պետք է կարճվի: Գ) Նույն հիմքով վարույթը պետք է կարճվի, քրեական հետապնդումը դադարեցվի, երբ ենթադրյալ հանրային հետապնդման հանցագործության առթիվ հարուցելուց հետո հետագա քննության ընթացքում պարզվի, որ պետք է արարքը վերադարձվել, ինչի արդյունքում փոխվում է հե-

SPECIFIC FEATURES OF PROCEEDINGS ON CASES OF PRIVATE PROSECUTION IN CRIMINAL PROCEEDINGS

տապալման ձևը հանրայինից մասնավորի: Այս պարագայում էլ, ըստ նոր քր. դատ. օր-ի կարգավորումների հանրային մարմինները պետք է դադարեցնեն քրեական հետապնդումը, կարճեն քրեական գործի վարույթը: Կարծում ենք, որ վերոգրյալ դեպքերում, երբ վարույթը հարուցվել է, նախաքննությունը գործարկվել է, այլ կերպ ասած, արդեն իսկ նախաքննության մարմնի ռեսուրսները ծախսվել են (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով), ապա նշված դեպքերում քրեական վարույթը կարճելու պահանջ նախատեսելը դառնում է ինքնամպատակը (չէ որ մասնավոր մեղադրանքի նոր քր. դատ. օր-ով նախատեսվող մոդելն ուներ նախաքննության ծանրաբեռնվածության թոթափման նպատակ):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Ղազարյան Ա., «Մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցությունը, // «Պետություն և իրավունք», № 2 (80), 2018թ., էջ 73-85:

2. Ղազարյան Ա., Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի մոդելների պատմական զարգացումը // «Պետություն և իրավունք» № 1 (83) 2019թ., էջ 65-74:

3. Ղազարյան Ա., Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը անգլոամերիկյան քրեադատավարական համակարգում (Մեծ բրիտանիա (Անգլիա, Ուելս), ԱՄՆ) // «Օրենքի պատվար» № 8, 2019թ., էջ 27-41:

4. Ղազարյան Ա., Մեղադրական (մրցակցային) քրեական դատավարության երկու տեսությունները // «Օրենքի պատվար» № 9, 2020թ., էջ 91-114:

5. Ղազարյան Ա., Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա) // Регион и мир, 2020, № 2, էջ 64-70:

6. Ղազարյան Ա., «Մասնավոր դելիկտի» տեսությունը, և դրա արտահայտությունները մասնավոր մեղադրանքի գործերի կազմակերպման նախագծային կարգավորումների վրա // Регион и мир, 2020, № 3, էջ 39-46:

7. Ղազարյան Ա., Մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող «տուժողին զթալու» տեսությունը և դրանից բխող դոգմատիկ հետևությունները // Регион и мир, 2020, № 4, էջ 26-31:

8. Ղազարյան Ա., Հայրենական (խորհրդային և հետխորհրդային) քրեական դատավարությունում «լրացնող» մասնավոր մեղադրանքի մասին // Օրենքի պատվար № 10, 2020թ., էջ 81-102:

9. Ղազարյան Ա., Սուբսիդիար մասնավոր մեղադրանքը քրեական դատավարությունում // Регион и мир, 2020, № 6, էջ 49-58:

10. Ղազարյան Ա., Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին // Պետություն և իրավունք № 3 (88) 2020, էջ 76-85:

11. Ալեքսանյան Ա., Ղազարյան Ա., Քրեական հետապնդման հարուցման սկզբունքի ընտրության և դատավարական միջոցների խնայողության հարցերի մասին // Օրինականություն № 124, 2021թ., էջ 5-9:

In the theory of criminal proceedings the study of the organizational issues of the prosecution has always been given a special place conditioned by fundamental importance of the prosecution in the function of criminal proceedings.

Realizing the public legal significance of crimes in our time this difficult, responsible function of prosecution is taken over by states. However, the organization of the prosecution in the form of a public prosecution, alongside with its positive aspects causes some negative consequences (there is a risk of "politicization" of the prosecution, a danger of insufficient resources of the state prosecuting authorities, the interests of the victim are neglected or put in the background, etc.). Consequently, there arises a need for individuals, particularly victims of crime, to participate in the prosecution.

On the other hand, however, just reserving the mechanical realization of prosecution to the victim, as well as, the automatic determination of the issues of the victim's participation in the management of initiated and implemented public (state) prosecution is full of further endangering the rights and legitimate interests of the victim and with the risk of ineffective protection of public interests. From this perspective the need in deep scientific study of the organization of the prosecution carried out by the victim becomes urgent. The urgency of the issue is paramount, especially in the context of the ongoing judicial reforms, especially in the context of the new RA Criminal Procedure Code adopted during this investigation, which proposes to introduce a completely different model from the current one on private prosecution.

The study attempts to carry out the utmost comprehensive and versatile discussion and analysis of private prosecution and the institutes of private prosecution cases and to offer comprehensive solutions that can help to avoid a number of practical problems.

The mentioned analyzes were carried out on the basis of the RA Criminal Procedure Code, the new RA Criminal Procedure Code, the new RA Criminal Code, legal acts related to relevant spheres, criminal procedure laws of foreign countries, comparative legal analysis of judicial practice, scientific approaches that can be found in different sources, RA Constitutional Court, on the legal positions of the RA Court of Cassation.

Issues, which were not investigated in the domestic litigation literature, such as the ratio of types of prosecution made by a private individuals are examined. In this regard, the paper proposes a clear criterion for classifying two types of prosecution made by a

private individual, that is, the private / public interest directly protected by the prosecution.

In addition, the study included a clear classification of types of private prosecutions, offering different classification criteria.

The issues of the link between private prosecution and disposition were considered in a completely different light. The thesis records the lack of an organic link between the private prosecution and disposition.

The study focuses on the relationship between private prosecution and private prosecution cases and it concludes that the private prosecution and the institutes of private prosecution cases can be interconnected (and, for instance, in the case of the theory of "private tort" they are intertwined), however, they are *independent institutions*.

The paper presents 4 theories substantiating the institute of private prosecution cases; critically analyzes the two theories of "private tort" and "ideal value" which are substantiating the institute of private prosecution cases and therefore concludes that the institution of private prosecution cases should not be built based on these two theories and their implications.

The work has critically analyzed the provisions of the RA Criminal Procedure Code, the new RA Criminal Code, the regulations of the new RA Criminal Procedure Code, as a result of which clear proposals were made to reform the incomplete legislative regulations.

ОСОБЕННОСТИ ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛАМ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

Для уголовного судопроизводства фундаментальное значение имеет функция уголовного преследования и в этой связи в теории уголовного процесса изучению организационных вопросов обвинения всегда уделялось особое место.

Осознавая общественно-правовую значимость преступлений, эту сложную и ответственную функцию обвинения в наше время в свои руки взяло государство. Однако организация обвинения в форме государственного обвинения, наряду со своей положительной стороной, влечёт за собой и ряд негативных последствий (существует риск «политизации» обвинения, риски недостаточных ресурсов органов государственного обвинения, пренебрежение интересами жертвы или отодвигание их на второй план и т. д.). Следовательно, существует потребность в участии в уголовном преследовании частных лиц и, в частности, пострадавшего от преступления лица.

Однако, с другой стороны, механическое возложение обвинения на потерпевшего и механическое определение вопросов участия потерпевшего в распоряжении обвинением, чревато опасностью дальнейшей угрозы правам и законным интересам потерпевшего, неэффективной защитой общественных интересов. В связи с этим становится актуальной необходимость изучения вопросы организации частного обвинения со стороны потерпевшего. Актуальность этого вопроса играет приоритетную роль также в контексте осуществляемых в настоящее время судебно-правовых реформ и особенно в контексте нового Уголовно-процессуального кодекса РА, согласно которому предлагается внедрить совершенно иную модель, существенно отличающуюся от действующей модели обвинения осуществляемого частным лицом.

В исследовании делается попытка как можно более комплексно и всесторонне обсудить, проанализировать институты частного обвинения и дела частного обвинения, предложить комплексные решения, которые позволят избежать ряда проблем, возникающих на практике.

Указанный анализ проведён на основе Уголовно-процессуального кодекса РА, нового Уголовно-процессуального кодекса РА, нового Уголовного кодекса РА, правовых актов в соответствующих сферах, уголовно-процессуального законодательства зарубежных стран, сравнительно-правового анализа судебной

практики, научных подходов, представленных в различных источниках, на основе правовых позиций Европейского суда по правам человека РА, Конституционного суда и Кассационного суда РА.

Кроме того, в исследовании предложена четкая классификация типов частных обвинений, критерии деления на классы. В совершенно другом свете рассмотрены вопросы связи частного обвинения и диспозитивности. В диссертации фиксируется отсутствие органической связи между частным обвинением и диспозитивностью. Предметом отдельного обуждения в исследовании становится взаимосвязь между институтами частного обвинения и дел частного обвинения. Делается вывод о том, что институты частного обвинения и дела частного обвинения могут быть взаимосвязаны (как например, в случае теории «частного деликта», где они взаимосвязаны), однако при этом они являются *независимыми институтами*.

В работе представлены 4 теории, обосновывающие институт дел частного обвинения, проведён критический анализ двух теорий: на основании этого сделан вывод о том что теория «частного деликта» и «идеального блага», обосновывающие институт частного обвинения, больше не актуальны, имеют много погрешностей и что в наше время уголовно-процессуальная система не должна конструировать производство дел частного обвинения на этих теориях.

В работе критически проанализированы положения Уголовно-процессуального кодекса РА, нового Уголовного кодекса РА, положения нового Уголовно-процессуального кодекса РА, в результате чего внесены конкретные предложения по реформированию неполных законодательных положений.

ՀՀ Ազգային գրադարան



NL1753755

